ՔԱՐՈԶԽՈՍԱԿԱՆ

Տ. ԳԵՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՐՈՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(1 հունվարի 2012 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Ամեն:

«Ապաշխարեցե՛ք, քանի որ մոտեցել
է երկնքի արքայությունը»:

Սիրելի հավատացյալ հայորդիներ,

Ահավասիկ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին վերստին իր բեմերից Նոր տարվա ավետիսն է հնչեցնում աշխարհասփյուռ իր ժողովրդի զավակներին: Ինչպես դարեր շարունակ, այսօր նույնպես սրբագործված ավանդույթի հետեւողությամբ՝ համախմբված լուսավորչահիմն խորանի առջեւ, բարի սրտով, անկեղծ ուրախությամբ դիմավորում ենք Նոր տարին: Մարդկանց իրար կապող ավելի զորավոր ազդակ չկա կյանքում, քան ավանդույթը: Այն կապ է ստեղծում անցյալի եւ ներկայի միջեւ, դրանով են սերունդները շարունակում իրար, այդպես է կերտվում պատմությունը: Մեր հարազատներից շատերն այս պահին իրենց տաքուկ տներում, բարեկամներով եւ ընկերներով շրջապատված, գեղեցիկ սեղանների շուրջ, մանուկների ուրախ խաղերի բացականչությունների ներքո, բարի ցանկություններ են փոխանակում, հույսի եւ սիրո հավաստումներ են շռայլում մեկ մեկու, հավերժ բարեկամության խոստումներ են տալիս: Գոհություն ենք մատուցում Ամենակալ Տիրոջն անցնող տարվա եւ գալիքի համար, հայցելով ուժ եւ եռանդ մեր ազգային հոգեւոր եւ բարոյական վեհ նպատակների իրագործման, երկրի անսասանության եւ խաղաղության համար:

Սիրելի հավատացյալներ,

Նոր տարվա առաջին օրն է այսօր, ողջ քրիստոնյա աշխարհը բարի սպասումներով է նայում կյանքին, ավելի լավ մի աշխարհ տեսնելու ակնկալիքով: Անվիճելի է, որ քրիստոնյա մարդկության կյանքում Նոր տարվա տոնը դրական զգացումների հետ է կապակցվում, նոր ծրագրերի եւ գաղափարների: Նույնիսկ նրանց մոտ, որոնք անցնող տարում ունեցել են ձախողումներ, ապրել են կորուստներ: Բոլորի մեջ էլ Նոր տարին կյանքը նորովի սկսելու զգացումն է ծնում, ստեղծագործելու ուժ է ներշնչում, լավատեսությամբ է տրամադրում աշխարհի հանդեպ: Մարդու կյանքում ավելի խանդավառող, ավելի հուսադրող այդպիսի միջոցառում չկա, քան Նոր տարվա խորհուրդն է իր հետ բերում, ազգային կամ համաքրիստոնեական նշանակության այդպիսի մի տոն չկա, որ իր մեջ ամփոփի մարդկության միեւնույն ձգտումները, որ կարողանա գեթ մեկ օրով միավորել բոլոր քրիստոնյաներին, նրանց մեկ ընտանիքի զավակներ, մեկ երկրի քաղաքացիներ դարձնել:

Սիրելի քույրեր եւ եղբայրներ,

Մենք հանդիսավոր կերպով ամեն տարի նշում ենք Նոր տարին, նվերներ ու բարի խոսքեր ենք փոխանակում, անակնկալներ ենք մատուցում միմյանց, սա տեղի է ունենում գիտակցաբար կամ սովորույթի ուժով: Սակայն հաճախ մոռանում ենք հարցնել ինքներս մեզ, թե ինչու ենք այսպես վարվում, պարզապես այն պատճառով, որ այդպես է ընդունվա՞ծ, թե՞ մի արտաքին ուժի ներգործությամբ, մի ներքին ցանկության մղումով: Իսկ միգուցե մոգական թաքնված մի ուժ կա տարվա այս օրվա մեջ, որ դարձնում է մեզ բոլորիս բարի, որ պարզապես ոգեշնչում է մեզ հավատալ արդարության հաղթանակին, լինել լավը մեր նմանի հանդեպ, հավատալ մեկս մյուսին, հաշտվել իրարու հետ, վերջապես, այն փոխում է մեր հայացքը կյանքի նկատմամբ, մարդու նկատմամբ, աշխարհի նկատմամբ: Հանկարծակի զգում ես, որ ուրիշ ես, եւ աշխարհն է ուրիշ, ուրիշ է նաեւ նա, որը թերեւս ջուգենալով, անգիտակցաբար քեզ վիրավորել էր, արագ արդարացումներ ես գտնում, ինքդ քեզ մանրախնդրության մեջ ես բռնում, հասկանում ես, որ պետք է հաշտվել, պետք է ներել ընկերոջը: Մենք անհամբերությամբ ենք սպասում Նոր տարվա ժամանմանը, այդ սպասումի մեջ այնքան հայտնի եւ ծածուկ ակնկալիք կա թաքնված, կարծես թե շատ կարեւոր մի բան պիտի փոխվի նրա ժամանումով, շատ էական մի բան պիտի գիտակցվի հանուր մարդկության կողմից: Այդ սպասումի մեջ հավատք կա թաքնված գալիքի հանդեպ, ապագայի հանդեպ, քրիստոնյա գիտակցության համար այդ սպասումը նույնական է Աստծու արքայության ակնկալիքի հետ:

Սիրելիներ,

Նոր տարվա խորհուրդն էկզիստենցիալ նշանակություն ունի մարդու համար, մարդն իր ողջ գոյությամբ է կապված նրա հետ, այս հարաբերությունը կարող է նույնիսկ չգիտակցվել երբեմն, սակայն այն ակտիվ հարաբերություն է, ներգործում է մեր գոյության վրա, օգնում է կարդալ ժամանակի նշանները, մտնել պատմության խորհուրդի մեջ, հասկանալ, որ մեր կյանքը մեզանից առաջ ապրածների կյանքի շարունակությունն է, գիտակցել մեր պարտքը ներկայի եւ ապագայի հանդեպ:

Աստվածաբանական մտածողության մեջ այն, ինչ որ խորհուրդ է, մինչեւ վերջ չի բացատրվում, եւ այն ինչ որ խորհուրդ է վախճանաբանական նշանակություն ունի, որի վերջնական իմաստն ու նպատակը ժամանակների լրումին պիտի բացահայտվի: Իսկ վախճանաբանական նշանակության յուրաքանչյուր աստվածաբանական հասկացողություն անմիջականորեն մարդու փրկության հետ է կապված: Ուշադրություն դարձրեք, որ Քրիստոսի Ծնունդն ու Մկրտությունը քրիստոնյա աշխարհն անմիջապես Նոր տարվա հետ է հարակցել: Սա նշանակում է, որ Նոր տարվա խորհուրդն անմիջականորեն Քրիստոսի ծննդի տնօրինական խորհրդի լույսի ներքո պետք է ըմբռնել, մարդու փրկության պատմության տեսանկյունից պետք է բացատրել:

Սակայն ինչո՞վ է տարին նոր. ամամայից հարց է առաջանում, լոկ ժամանակի իմաստո՞վ: Թերեւս ոչ քրիստոնյա մտածողության համար՝ այո միայն ժամանակային իմաստով է տարին նոր, միայն անցյալի պատմության հարաբերությամբ է նոր, մարդկային մշակույթի փոփոխությամբ է նոր, քրիստոնյայի համար ժամանակի թվաբանական բաժանումով չի նորանում կամ հնանում տարին, քրիստոնյայի համար ժամանակի այլ բաժանում է գործում,

նրա համար նոր ժամանակը, նոր տարին, նոր կյանքն սկսվում է հավատքի իրագործման հանգրվաններով: Քրիստոնյա մտածողությունը նորը միայն Քրիստոսի մեջ է փնտրում, նրանից դուրս «Ոչ մի նոր բան չկա արեգակի ներքո. որովհետև ոչ ոք չի կարող ասել ահա սա նոր է, քանի որ դա եղել է վաղուց, հավիտենապես՝ մեզնից առաջ եղածների մեջ «Այն ինչ եղել է, նույնն էլ պիտի լինի եւ այն ինչ կատարվել է, նույնն էլ պիտի կատարվի»,-բարձրաձայնում է Իսրայելի Սողոմոն Իմաստուն արքան: Հետեւաբար Նոր տարվա խորհուրդը նոր կյանքի գաղափարն է արտահայտում, որը երկակի նշանակություն ունի մեզ համար, այն եւ՝ ներկային է վերաբերում եւ՝ ապագային. ներկային է վերաբերում նրանով, որ մեր վերափոխումն է պահանջում, իսկ ապագային՝ քանի որ եկեղեցու վախճանաբանական նպատակն է բացահայտում:

Իսկ, ինչպե՞ս կարող ենք նոր կյանք սկսել: Մի՞թե առաջին անգամ է հնչում նոր կյանք սկսելու քարոզը, շատերն են բարձրաձայնել դրա անհրաժեշտության մասին, բոլոր ժամանակների կրոնական, մտավորական եւ քաղաքական երեւելի դեմքերը պայքարել են դրա համար, ամբոխներ են ոտքի կանգնել հանուն նոր կյանքի, հեղափոխություններ են պայթել, հոսել է մարդկային արյունը, գահեր են տապալվել, թագավորներ են գլխատվել: Մարդը հասկացել է, որ այս աշխարհակարգի պայմաններն անհավասար են, մեկը կարողանում է իրագործել իրեն, մյուսը զրկված է լիարժեքորեն արտահայտվելու հնարավորությունից, մեկը լավ է ապրում, մյուսն իր գոյությունն է քարշ տալիս աղքատության ծանր բեռի տակ, մեկը բավարար ուժ է գտնում պայքարելու սեփական եսի համար, մյուսը չի դիմանում մրցությանը եւ ընկնում է, մեկը կարողանում է առաքինի կյանք վարել, մյուսը չի կարողանում ազատվել մեղքի, փորձության ճիրաններից: Անհավասար երջանկություն: Մարդկության երազած նոր կյանքը համընդհանուր երջանկություն պիտի բերի: Սակայն պատմությունն ապացուցում է, որ մարդկային ոչ մի ծրագիր չի կարողացել ապահովել այդ նոր կյանքը. ասպվածային սեր եւ արդարություն է պահանջվում համընդհանուր երջանկության համար, գերբնական միջամտություն է անրաժեշտ: Մարդկության համընդհանուր երջանկության տեսիլքը քրիստոնեական մտածողության համար նույնական է Աստծու արքայության քարոզի հետ: Այն գիտակցումը, որ նոր կյանք պետք է սկսել, արդեն մոտեցնում է Աստծու արքայության ժամանումը, սակայն որպեսզի արքայությունը ժամանի պետք է ապաշխարել, «Ապաշխարեցեք, քանի որ մոտեցել է երկնքի արքայությունը»,- բարձրաձայնում է Հովհաննես Մկրտիչը: Նոր կյանքը միայն ապաշխարությամբ կարող է գալ, այդ ապաշխարության կարիքն ունեն բոլորն անխտիր, թե՛ արդար եւ թե՛ մեղավոր: Մեր արդարությունը կատարյալ չի լինի այնքան ժամանակ, քանի դեռ աշխարհի երեսից իսպառ չի վերացել անհավասարությունը, քանի դեռ աշխարհն ուժի սկզբունքով է ղեկավարվում: Սրբերն ու ճգնակյաց այրերը հանուն աշխարհի փրկության լքեցին աշխարհը եւ քաշվեցին անապատ աշխարհի համար ապաշխարելու, եւ ապաշխարեցին մեզանից յուրաքանչյուրի համար, ապաշխարեցին մարդու եւ աշխարհի հանդեպ տածած անմնացորդ սիրո գիտակցությամբ: Ապաշխարության խորհուրդը, հետեւաբար, միայն մեր անձնական փրկությանը չի վերաբերում, քրիստոնեությունը հեռու է նեղ եսասիրության քարոզից, այն հիմնված է Աստծու հայրության խորհրդի վրա, որը մեր կապվածությունն է բացահայտում աշխարհի հետ: Այն, որ Քրիստոս Աստծուն «Հայր» է անվանում, նշանակում է, որ մենք բոլորս եղբայրներ ու քույրեր ենք, մենք կապված

ենք իրար հոգեւոր արյունակցությամբ, Աստծու հայրության առջեւ վերանում է ցանկացած տեսակի բաժանում, թշնամություն, խտրականություն, սուտ ու անարդարություն: Արդ մեր ապաշխարությունը նաեւ մեր եղբայրների փրկության համար է, աշխարհի փրկության համար է:

Սիրելի հավատացյալ քույրեր եւ եղբայրներ,

Մեր ամանորյա պատգամն է ձեզ, որ Աստծու հայրության գիտակցությամբ ապրեք ձեր կյանքը, որ Նոր տարին ոչինչ նոր չի բերի իր հետ, եթե չվանանք մեր անձերը հին մեղքերից, որ հանապազ ապաշխարության խորհուրդի մեջ ապրենք, որ հասկանանք միայն մեր արդարությամբ չի փոխվի այս աշխարհը, մեր պարտականությունն է, որ մեր եղբայրներն ու քույրերն էլ փնտրեն Աստծու արքայությունն ու նրա արդարությունը, ապրենք ոչ միայն մեր կյանքով, այլեւ հանուն մեր եղբայրների եւ քույրերի: Նայե՛ք Քրիստոսին եւ քայլեք նրա հետեւից, նա է ճշմարիտ խաղաղություն տվողը, մնացածը «Ունայնություն է եւ հոգու տանջանք» (Ժողովող Ա. 14-18): Ուստի «Ապաշխարեցե՛ք, քանի որ մոտեցել է երկնքի արքայությունը»: